

Թեան եւ յընթերցման զրոց պարապեալ. եւ ես յարուցեալ զնացի մօտ առ նա զրուցատրելոյ աղագաւ վասն Երուսաղէմ զնալոյ պատրաստութեան մեր եւ նորա. որ նորա այլ կամք էր զնալոյ եւ փոյթ էր ի զնալն: Խօսեցաք երկու երեք ժամս» (էջ 170):

6. ՄՈՎԱԿԱՆ՝ ՎԱՐԴԱՊԵՏ

Մովսէսի մտադրութիւնն էր գաւազան ստանալէն ետքը անգամ մըն ալ սյցելել Երուսաղէմ եւ ապա վերադառնալ Հայրենիք: Բայց թէ ինչո՞ւ սյնչափ կը ձգձգէր Կեսարացին շնորհելու Մովսէսի գաւազանի իշխանութիւնը, դժուար է ըսել: Մովսէս այժմ կը գտնուէր իւր Յարորդ հասակին մէջ. աւելի քան 8 տարի մնացած էր վարդապետին քով: Ծանօթ է այլուստ Կեսարացւոյն խստապահանջ բնավորութիւնը. եւ այս տեղ պէտք է փնտռել յապաղման պատճառը: Ընդհակառակը մեղմ էր Մովսէս, հեղաբարոյ. չէր իշխեր անձամբ ներկայացնել արձակման արդար պահանջը: Իր զգածմանց թարգմանն եղաւ ժողովուրդը, որ հանդիսատես էր անոր առաքինի վարքին եւ ուսումնասէր ջանքերուն. «առ որ հաճեալ եւ հաւանեալ ամենայն ժողովուրդն Կ. Պոլսի եկեղեցականք եւ աշխարհականք, եւ երեւելի արք, որպէս Շահին չալապին, որ էր այր նշանաւոր ի դրան թագաւորին, եւ այլք եւս յոլովք: Նաեւ վաճառականք արեւելեան աշխարհին,